

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1897 տարեշրջանի
Պոչկարիոյ համար տարեկան 10 ֆր
" " 1/2 " 5 "
Արտասահմանի համար " 12 "
" " 1/2 " 6 "
Կանխիկ վճարելի

Համակ յրաւ եւայլն խշկել հետեւեալ հասցեով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻՍ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
ետ չեն յրկուսի եւ յարմար դատ-
ուածներն միայն կը հրատարակ-
ուին ամբողջովին կամ մասամբ:
Ծանուցմանց տողը 20 սանթիմ.
երեքէն աւելի անգամներու համար
20 առ 100 զեղ կը լինի:

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Ահա բառ մը որ իր մէջ կը պարունակէ իմաստներու ամենէն ընդարձակն ու վսեմը:

Ուսուցիչը այն անձն է որ իր վրայ կ'ամփոփէ համեստութեան, պարկեշտութեան և անսահման երկայնամտութեան բոլոր յատկու- թիւնները, որոնք իր հմտու- թեանց հետ միասին, իր արժան- ևաց զլսաւոր մասերը կը կազ- մեն:

Ճշմարիտ ուսուցիչը աշխարհիս մեծագոյն գործաւորն է. իր գոր- ծունէութեան առարկան ոչ ոսկին է և ոչ ադամանդը. այլ այնպիսի անդնդախոր հանք մը ընտրած է իրեն ասպարէզ, որմէ անգին դան- ձեր արտաբերելու միջոցն ունի. այսինքն մարդկային միտքն ու սիրտը. կամ, ինչ որ նոյնն է՝ ի- մացականութիւնը և զգացում- ները:

Դպրոցէն դուրս ուսուցիչը բա- րեկրթութեան ներկայացուցիչն է, իսկ անմեղ և անզիտակ պատանի- ներէ բոլորուած ատեն, իր պաշ- տօնին կիրառման պահուն, ու- սուցչին դերը վսեմ է:

Հոն է որ ան կը մըլտէ իր գոր- ծին ամբողջ կարեւորութիւնը և ինքզինքը մեծ կը զգայ աշխարհի մէջ:

Ահա փոքրիկներու խումբ մը որ կախուած իր շրթերէն, սքան- չացմամբ և գորովով մտիկ կ'ընեն զինքը: Այդ խումբը, ընկերու- թեան մէկ մասն է, և ինք՝ անոր բացարձակ տէրը:

Ինք է որ պիտի զարգացնէ ա- նոնց սրտերուն մէջ այն գանձերը որոնց սերմերը միայն դրած է հոն բնութիւնը. ինք է որ կատարե- լագործման ճամբուն մէջ պիտի դնէ ապագայ մարդը, անոր ներ- չնչնով սէրը գեղեցկին, բարիին և ճշմարտին. վերջապէս ինքն է որ Աստուծոյ պիտի գործակցի, անոր սկսածը շարունակելով:

Ուսուցիչը իր հրեղէն խօսքե- րովը կրնայ այնքան խոր տպաւո- րութիւն գործել պատանիներու մտքին վրայ, որ այդ տպաւորու-

թիւնները անքակտելի մնան և շատ անգամ իրականութեան փոխ- ուին գործնական կեանքի մէջ: Կրնայ արտադրել աշխարհիս ա- մենին օգտակար անհատները ինչ- պէս և յիտին անզգամները. քա- ջորի և կորովի անձնը՝ ինչպէս նոսեւ վատ, դանդաղ և մեղկ ա- րարածներ. զուարթ և առողջ մտքի՝ ինչպէս լալկան յոռետես- ներ, անպէտ թէ՛ իրենց և թէ՛ այն ընկերութեան ուր կ'ապրին:

Եթէ աշխարհի բոլոր ուսուցիչ- ները միանալով մէկ յայտագրով, և գաղափարներու նոյն հոսանք- ներով տիեզերական միօրինակ դաստիարակութիւն մը հաստա- տէ՛ն, մօտաւոր ապագայի մը մէջ ամբողջ աշխարհ իրենց փափա- գած ձևը կրնար առնել թերեւս:

Պէտք է խոստովանել որ եթէ մինչեւ ցարդ ընկերութիւնը, ա- մեն երկրի մէջ, մեծամեծ վար- ձատրութիւններ չէ չլուրջած ու- սուցչին, որուն բաժինը և ճակա- տագիրը եղած է միշտ անշուք ապրել, գէթ վստահութեան ա- մենէն մեծ ապացոյցով պատուած է զինքը:

Եւ արդարեւ թէ ինչ աւերում- ներ և զեղծումներ կրնայ գործել անխիղճ ուսուցիչը որուն կը յանձ- նուի մարդկային ամենէն նուիրա- կան ինչքերուն մշակումը, բացո- րոյ է:

Ակնկալուածին ճիշդ ներհակը առաջ կը բերէ. և ինչպէս որ համ- բակ բժիշկը, իր սխալ դեղերով հիւանդը կը սպանէ, նոյնպէս ալ յոռի ուսուցիչը իր թիւր ուսու- ցումներով կրնայ ամեն զարգա- ցում, ամեն թռիչ, ամեն հանճար խեղդել ու բնաջինջ ընել տղուն մէջ. մէկը՝ դիակներ առաջ կը բերէ ինչ որ անշուշտ ցաւալի է. իսկ միւսը՝ կենդանի միակեանք, ինչ որ դարհուրելի է:

Մեր մէջ հարկ է խոստովանել թէ վերջին քառորդ դարու մէջ, ուսուցչութիւնը զգալի բալլեր ա- ռած է գէպ ի բարին, նախկին ստորաքարշ նկարագիրը թոթա- փելով, և զարգանալով այն ըն- դարձակ հմտութիւններով և այն բարոյական բարեմասնութիւններով

որոնք իտեալ ուսուցչի կը մօտե- ցնեն:

Բայց ասոնց աւելնից, որոնց թիւը դժբախտաբար շատ անը- շան եղած է, եկած են դեղուիլ նաեւ անոնք որ շատ անորոշ և թիւր ըմբռնում մը միայն ունին իրենց պաշտօնին և կոչման վը- րայ:

Ասոնք պարտականութիւն սե- պած են մեռելական անշարժու- թիւն մը պահել և պատմական կոթողի մը պէս անքթիթ մնալ իրենց տեղը, առանց թիզ մը յաւալդիմելու, առանց մանկա- վարժութեան նորութեանց հետե- լելու և վերջապէս առանց քննե- լու, պրպտելու և կատարելագոր- ծուիլ ջանալու:

Միշտ դժգոհ, ձանձրացող և ձանձրացնող այս էակները ուրիշ իղձ չեն կրնր այլ յարմար բոպէն խոյս տալու ասպարէզէն: Բայց որովհետեւ երբեք չի դար այդ բոպէն ինչչր չեն խորհրդ իրենց գիրքը բռնելու համար: Փոխա- նակ ամենուն համարումը շահե- լու անձնական արժանիքով՝ ինչ որ ամենէն անվրիպելի և միակ միջոցն է, կողմնակի միջոցներու կը դիմեն, իրենց պաշտօնակցաց մէջ գժտութեան որով կը ցանեն, աշակերտներուն ներկայութեանը կը չարախօսեն, անբարոյականու- թեան առաջին օրինակը հանդի- սանալով, մէկ խօսքով տիպարը կը հանդիսանան այն անձնաւո- րութեան որու մասին խօսած է ինք մեր Մանիլակ և Տաուաւի խորագրով յօդուածին մէջ:

Խնդրեմ, այսպիսի տխուր նը- կարագրով օժտուած մէկը ինչ վնճ զգացում, ինչ ըղձալի դա- տիարակութիւն կրնայ տալ իր խնամքին յանձնուած մանկտիներ- րուն:

Դպրոցի մէջ այսպիսիներու ներկայութիւնն իսկ կը բաւէ իր փաստակար ազդեցութիւնը գոր- ծելու. զի դաստիարակութիւնը շատ անգամ ո՛չ թէ խօսքով այլ ուղղակի ներշնչմամբ կը կատա- րուի: Եւ արդարեւ չես գիտեր ինչ գաղտնի օրէնքով տղան իր ուսուցչին վրայ կը կազապարուի

իւրացնելով անոր հոգին և նոյն իսկ մարմինը: Դատեցէ՛ք եթէ տղան կրնայ դառնալ իր կարգին դանդաղ և անպէտ և երբեմն փորձանք այն շրջանակին զլխուն ուր նա պիտի ապրի. և այս նոյն տղան է որ տարբեր պայմաննե- րու տակ, վեհանձնութեան տի- պար մը և մարդկութեան բարե- բար մը կրնար դառնալ:

Յոռի ուսուցիչը ընկերութեան մը ամենէն վնասակար տարրն է: Այն ազգը որ բաւական նրբամը- տութիւն չունի այս աւագ խնդ- րին մէջ յստակ տեսնելու, միշտ կը տուժէ:

Մէկ միջոց կը մնայ անոնցմէ փրկուելու, փրկելու մանկութիւնը և ապագան, այն է՝ Յիսուսի խա- րաղանով մտնել անոնց մէջ:

Գամեր-Արշալիս

ԽՈՏՈՐՈՒՄ

Ա.

Թուրքիոյ սահմաններէն դուրս գտնուող հայ լրագրութիւնը ա- պագային պիտի ունենայ իր որոշ ու ինքնատիպ պատմութիւնը, ա- նոր համար որ ազգին ճակատա- գրին վրայ անկա սահմանուած է ունենալ (ինչպէս արդէն ունեցած է) ահագին ազդեցութիւն, գաղա- փարներու արտայայտութեան ա- զատ ու անկաշկանդ հանգաման- քին պատճառովը: Օտար մթնո- լորտի տակ ոգեւորուող, գոռացող ու ներշնչող այս մամուլին, սա վերջին տասնըհինգ տարիներու ըն- թացքին մէջ, հայ ժողովրդեան ապրելու, կառավարուելու ձեւի մասին առաջ բերած ահագին յե- ղաշրջումը արդէն մէկ ակնարկով դիւրին է ըմբռնել, աչքի առջեւ բերելով ու բաղդատելով հայ տար- րին համագումները, ըմբռնումնե- րը, զորս ունէր սակեց քսան տա- րի առաջ և զորս ունի այժմ: Ձեռք բերուած բարեշրջումը արեւի պէս պայծառաւառալ է:

Բայց թէ ազատ երկնքի տակ ապրող այս լրագրութիւնը այդ

ժամանակամիջոցին մէջ ունեցաւ իր որոշ, անխտոր, սեւեռուած ուղղութիւնը, նպատակակէտը՝ վեհ ու նուիրական, որուն շուրջ գար խոնուէր ու խտանար ամէն իղձ, ձգտում և իտէալ. թէ այս մամուլը բարոյական ինչ տոկոս նութիւն ունեցաւ հանդէպ այն դատին զոր առաջին առթիւ «սուրբ» անուանեց. թէ վերջապէս, ազգային ազատութեան շատագոյն այս մամուլը, հանգամանքներու անզգալի ու անգիտալից բերումով մը, ձախողութեան ներ չի կրեց՝ դուրս ելլալով այն հարթ ու շիտակ ճամբէն զոր մըտադրած է կտրել անցնիլ մինչեւ վերջին ծայրը:

Այս հարցը, որ բնաւ ախորժելի չէ դասակարգի մը որ ինքն իսկ ստեղծած է զայն, մեր աչքին առջեւ կը պարզէ հեռագատիկ մը, որուն խորունկը ընդշնչմանով լոյսը քանի մօտենայ կը տփուկնի, կը մթնէ:

Ինչպէս արդէն մեր ազգային կեանքի ամեն պարագաներուն մէջ, հոս ալ վեր ցցուեցաւ անհամերաշխութեան սեւ ու քայքայող ոգին, որ կիսատ ու թերի ձգեց ինչ որ միահամուռ գործունէութեամբ մը գլուխ պիտի հանուէր:

Ասկից տասը տարի առաջ ինքզինքնին հայկական սուրբ դատին անվեհեր ու անձնազոհ հերոսներ հռչակող հրապարակախօսներ ու հրապարակագիրներ, ցաւալի վոյքֆառով մը, ինքզինքնին մկրտած են յաւիտեական յամառ ընդդիմադիրներ յեղափոխութեան գաղափարին, զոր իրենց մենաշնորհը կը հռչակէին առաջ և զոր հիմա ոճիր մը կը յայտարարեն՝ զայն ուրիշներու վրայ փոխադրուած տեսնելով:

Արտասահմանի հայ մամուլը, իր զարգացման ու անկման փոխնիփոխ ելեւէջներուն մէջ, գեռտասը տարի չընեն, բուն հրաբուխ կը ժայլօքէր՝ բռնկեցնելու համար ժողովրդային բոցավառ:

Հնոց մը, ուսկից պիտի գուրս ցայտէր ազատութեան կայծը: Անսահման ժողովրդականութիւն վայելող մամուլի ներկայացուցիչները՝ ներքողականներէ փախած՝ կարծեցին թէ իրենց «երկաթէ» բռունցքին մէջ սեղծած են ազգային փրկութեան լծակը: Դժբախտաբար իրենք անհուն փորձախնարով հեռու կը գտնուէին այդ լծակէն, զոր երբեք չյաջողեցան շարժել և զոր տեսնելով ուրիշ աւելի յարմար ձեռքերու անցած, սկսան հարուածել զայն:

Ե.

ԵԼԼՏԸՁ ՔԵՕՇԿԻՆ

ՆԱՄԱԿ ՄԻ

Ինչու՞ զիջողի զրազիրներէն մէկը վառնա բնակող իր մէկ քրիստոնեայ բարեկամին գրած է նամակ մը, որուն թարգմանութիւնը կը գնենք ստորեւ և որ հաւատարմաբար կը պատկերացնէ յունական պատերազմէն և հնդկական ապստամբութենէն ետքը պալատին մէջ տիրող տրամագրութիւնները և քաղաքական յաւակնութիւնները:

Կ. Պօլիս 16 Օգոստ.

Սերելեք իմ Պր.

Ինչպէս որ արդէն համոզուած ըլլալու էք, մեր Հնդկաստանցի կրօնակիցները յաջող ճամբու մէջ են մեր վրէժն առնելու՝ ազգեցիկ և բրիտանական հսկային համար զգալի կերպով մը:

Պալատին մէջ ամէն մարդ ուրախ է այս յաջողութիւններուն համար և Սուլթանը որ ն. շնորհալի վեհափառութեան վիթօրիա թագուհիին կոչալ ներկայացուցիչ Պր. Յ. Քըրքի կողմէն այնքան ստորնացումներ կրեց, այս ամենուն համար ունեցաւ փառաւոր դիմացում մը:

Պալատում են իրանց յանցանքի եւ աստիճանի համեմատ: Սենեակները երբէք չեն փակուում, նոյն իսկ գիշերները: Բաւական մաքուր, կերակուրները տանելի: Աւելի զօրանոցի է նմանում: Ես գտնուում էի այն բաժնում ուր աւելի ազատ էր: Մեր բաժնում էին եւ նրանք որոնք իրանց տներն էին աքսորվում անցագիր չունենալու պատճառով:

Երբ առաջին անգամ հետաքրքրվեցի անցագիր չունեցողներին մէկի վիճակով՝ նա ինձ ասաց.

— Ես, ես ինչ գիտեմ, սատանան տանէ զրանց. ես կեանքումս բանտ չէի մտել, հիմա մտածում էի խեղճ երեսաներիս եւ կնոջս մասին. խոստացել էի որ Սուրբ Սալչին դրամ ուղարկեմ. բայց ինչպէս ուղարկեմ. քաղաքը զարկում համար պարտք վերցրի մինչեւ զարկ պարտքով եմ ապրել, անցեալ տարի հունիսը վատ էր, վերցրածս դրամի մի մասը տունը թողի երեսաներիս համար, միւսը անցեալ

իմ պաշտօնակիցներէս շատերուն պէս Հնդկաստան երթալու փափաքով կը բռնկիմ, որպէս զի աւելի քաջալերեմ եստէր Ալպինոն անտանելի լուծին տակ չարչարուող իմ կրօնակիցներս:

Դուք միշտ յոռետես եղած էք թուրքի զորքերուն նկատմամբ, բայց հիմայ կը սիրեմ յուսով որ ձեր գաղափարները պիտի փոխէք: Անգլիա պիտի կորսնցնէ իր հարստութեան և մեծութեան աղբիւրը և մահիլը պիտի սկսի վերստին ձայն մը ունենալ քաղաքական գործերու մէջ:

. . . պէյ եկաւ ըսաւ ինձ թէ ես ալ ընդհուպ պիտի մեկնիմ դէպի Հնդկաստան:

Պալատին մէջ յաճախ կը խօսինք ձեր վրայ: Ինչ կընէք հիմայ:

Գրեցէք ինձ քանի մը տող մեկնելէս առաջ:

Միշտ որսի կ'երթամք: Երբ շունիմ ձեզ բարեկամուար և կըսպասեմ ձեր լուրերուն:

Հնդկացիք ինձ մինչեւ Հնդկաստան. ծախքը ես կը վճարեմ: Զիտ անձնուէրը . . .

ԴԱՐՁԵԱԼ Փ. ՊՈԼՍՈՅ

ՎԱՐԺԱՐԱՆԵՐԸ

(Նախկին խմբագրութեան)

Փ. Պօլիս, 1 Սեպտ.

Մեր վարժարանի անցած տարեշրջանին ուսումնաւարտները երեք էին, որոնցմէ մէկը վաճառականի մը քով գրագրութեան պաշտօն ստանձնեց, երկրորդը տակաւին որոշած չէ իր վիճակը, իսկ երրորդը, աղքատիկ ընտանիքի մը զաւակ, այստեղի կիմնազիայի մէջ յաջող քննութիւն մը անցունելով ընդունուեցաւ նոյն վարժարանին՝ Գ. դասարանը: Նոյնպէս մեր վարժարանի Դ.

կարգի աշակերտներէն մէկը, որ ըսել է տակաւին երկու տարի ետքը չըջանաւարտ պիտի ըլլար, զանազան պատճառներով այժմէն կիմնազիա յաճախել ուզելով, այնտեղ քննուելէ ետք ընդունուեցաւ Ա. դասարանը:

Այս իրողութիւնները յայտնի ապացոյց մըն են թէ մեր դպրոցական ծրագիրը ըստ կարելւոյն յարմարցուած է կառավարական կիմնազիաի ծրագրին:

Իրաւ է որ մեր վարժարանները կրնան աւելի յառաջագնաց վիճակի մը մէջ դրուել, այնպէս որ չըջանաւարտները պատրաստուած ըլլան կիմնազիային աւելի վերին դասարաններուն մէջ ընդունուելու: Այսպիսի կարգադրութիւն մը ընտանաբար աշակերտներուն գիւրութիւն պիտի տար ազգ. վարժարանին մէջ 1-2 տարի աւելի մնալու և հետեւապէս աւելի զարգանալու մայրենի լեզուի և ազգ. պատմութեան մէջ:

Սակայն ասոր համար երկու բան հարկաւոր է. կամք և ուղի: Խառնուրդն, որոց երկուքն ալ, մանաւանդ վերջինը, մեր մէջ հետընկնտէ այնքան պակասելու վերայ են որ եթէ ասանկ երթայ, կը վախճալ թէ շատ հեռու չէ այն ժամանակը ուր հարկ պիտի ըլլայ թոշակաւոր մարդիկ փրկուել հոգաբարձու և թաղական ընելու համար: Իրերու այս վիճակին մէջ մեր վարժարանները իրենց ծրագրով և համեստ պիւտճեով շատ են ու քիչ չեն մեզ համար:

Այս տողերուն նպատակը մեր վարժարանները գովել չէ, ալ ճշմարտութիւնը երեւան հանել և ցուցնել որ եթէ մեր դպրոցական ծրագիրը քննադատելի կողմեր ունի, ունի նաեւ քիչ շատ հիմնական ուղղութիւն մը զոր բոլորովին անտես ընել ճշմարտութեան դէմ մեղանշել է: Բայց ուսուցանելու եղանակները մանկավարժական արդի պահանջներուն չ'են համապատասխաներ եղեր,

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ԶՈՒՆԵՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՔՍՈՐԵԱԼԻ ՅԵՒՏԱԿԱՐԱՆԻՑ)

— — —

Ե.

— — —

Սակայն պէտք է ասել որ արտաքուստ սարսափեցնող դժոխքը, ներքուստ այնքան ահուկ չէր: Նրա մէջտեղում կար հրապարակ, ուր բարձրանում էր բաւական գեղեցիկ եւ առանձնացած շինութիւն, եթէ չեմ մոռացել եկեղեցի: Հրապարակի բոլորով ձգվում էին երկար, լայն ու խոշոր լուսամուտներով միջանցքներ: Բանտարկեալների սենեակները գտնուէինք այդ միջանցքների միջով: Սենեակներն էլ ընդարձակ եւ բաւական լուսաւորեալ էին: Բանտը ունի բաժանմունքներ, ուր յանցաւորները տե-

տարւայ պարտքիս ամենաչնչին մասը վճարեցի, վերջապէս մի կերպ ինձ գցեցի այս անիծեալ քաղաքը: Մի ամիս պարապ մնացի, հազիւ գործ գտայ, այն էլ ձերբակալեցին— եւ յանցանքս ինչ է, թղթի կտոր չունեմ: Բայց ինչո՞վ առնէի, ինչո՞քիմ դու ասա՝ է՛հ սարսափելի է մեր վիճակը, Աստուած վերջը բարի անի. բայց ե՞րբ է այդ վերջը ես էլ չը գիտեմ: Կարծեմ աւելի լաւ է մեռնել, քան թէ այսպէս ապրել: հիմա դատարկ գրպանով տուն կը հասնիմ— հարկս կը պահանջեն. պարտքս կը պահանջեն. կեքթամ մի քիչ դրամ կառնեմ եւ կը տեսնեմ որ չեմ կարող դրանով թէ պարտիցս ազատուել, թէ հարկը վճարել— կը գնամ գինեւուն, եւ կը ջանամ արագի չոգու մէջ մոռանալ իմ վշտերը— հարբաց տուն կը դառնամ, կիսն կսկսի ճվալ հայհոյել. կսկսիմ նրան ծեծել երեսաներս կսկսիմ ճվալ վախենալ, նրանց էլ կը ծեծեմ եւ այդպէս կապրինք չան նման . . . եւ այդ բոլոր թղթի կտորի

համար, օ՛խ անիծեալ թղթի կտոր . . . քո հնարդի . . .

Գրեթէ անցագրի պատճառով բոլոր ձերբակալվածները միեւնոյնը էին պատմում: Եւ ամբողջ Ռուսաստանում միեւնոյնաբար գիւղացիք միեւնոյն դրուեան մէջ են եւ ովքեր սեղանը իրենց աղքատ հայրենիքից դուրս գալ եւ զրամ չահիլ դեռ տեղ չը գտած, մի քանի բուրդի չը չափած ձերբակալվում են եւ ուղարկվում իրանց գիւղերը, ուր նրանց ասնջում է պարտատէրը, գիւղի տանուտէրը եւ հարկահան օստիկանը . . .

Ես սկսել էի ձանձրանալ, արդէն երեք օր որ խօսակիցներս գրեթէ միեւնոյն մարդիկն էին. մշակված ուղիղի պէտք էի դրում: Այդ երեկոյ քաղաքի տարար ծանօթացայ մի հրէյս համալսարանականի հետ. նրան աքսորում էին Իրկուսով, միջին սիբիր, վեց տարով: Երկրորդ անգամ էր որ պարտքը գտնվում էր այս բանտում: Առաջին անգամ ուսանողական խառ-

ասոր համար ալ ամենէն աւելի պատասխանատու են անոնք որոնք եթէ ուզեն, կրնան լաւագոյն դրութիւն մը տալ վարժարաններուն, ընդարձակել ծրագիրը եւն., սակայն չեն ուզեր աշխատիլ, ժամանակ վատնել և կը բաւականանան միայն վարժարանները ըննադատելով: Ասանք Աւետարանի քանքարաթաղոյցներն են. ունին, բայց չեն ուզեր գործածել իրենց բարոյական կարողութիւնը ինպատակ ազգ. դաստիարակութեան:

Կեդրակացնեմ թէ մեր վարժարանները եթէ ոչ այնչափ նախանշիկ, գէթ փոքր իշատեցեանաւոր ընթացքի մը մէջ են և թէ անոնց վրայ ձեռք տրուած տեղեկութիւնները բոլորովին անկողմնակալ չեն:


Հաճեցէք հեն.

Ձեռք հասկնալ թէ յարգելի նամակագիրը ինչ բանէ կը հետեւցնէ թէ մեզ տրուած տեղեկութիւններ անկողմնակալ չեն:

Ինք կը պնդէ որ եթէ վարժարանը թերի կողմեր ունի, լաւ կողմեր ալ չեն պակսիր իրեն. Լաւ. սակայն այս ալ ճիշդ է որ ոչ ոք մինչեւ հիմայ ասոր հակառակը պնդեց և ըսաւ թէ ֆ. Պօլսոյ վարժարանները ամէն տեսակէտով անկանոն և աղբիւր համար անօգուտ են:

Մենք պարզապէս քանի մը դիտողութիւններ ըրած ենք, զոր մեր նամակագիր բարեկամն ալ չհերքեր: Ուրեմն խնդրին մէջ իսկապէս անհամաձայնութիւն մը չկայ իր և մեր միջև:

ԻՐԱՆԻՆՔԻ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ



Գ. Ի Թ. — Շնորհակալ ենք ձեր համակրութենէն: Իրաւունքի զըրամական անձկութեան մասին ձեր զարմանքը մեզ չի զարմացնիր, որովհետեւ կը կարծէք թէ

նակութիւնների միջոցին:

Մենք այդ երեկոյ միասին թէյ խմեցինք: Վերջը դուրս եկանք միջանցքում չընթացելու եւ մեր խօսակցութիւնը նոր էր սկսել սաքանալ երբ լսեց ընտանեկանի որոտալից ձայնը — ձեռքի ղող, բանտապետը գալիս է: Ի հարկ է բոլորս էլ առանց յապաղելու գնացինք մեր սենեակները: Բանտապետը մեր թիւը ստուգեց և գնաց: Նրանից յետոյ արդէն մեռելային լուծութիւնը տիրեց ամբողջ բանտում: Բլ որ այդ լուծութիւնը խանգարէր՝ նրա համար պատրաստ էր հուժկու պահապանի բռնուցքը: Կռկի հասա կրունկը և հայցոյանքը:

Ինչ արած, մենք էլ պարկեցինք: Սակայն քուրը չէր մօտենում աչքերին... երբ որ մի փոքր աչքերս փակվում էին, յանկարծ աղոտ լուսաւորված սենեակի այս և այն անկիւնից լսվում էր քնի մէջ խօսողների ձայնը: մէկն ասում էր. է՛հ, սիրելիս, գալիս եմ, բայց դատարկ գրպանով... միւ-

նա՞նք իր Բուր ընթերցողները կը վճարեն և թէ ամէն բաժանորդ ձեռք պէս կանխիկ կը վճարէ իր տարեկան կամ գոնէ վեց ամսեայ բաժնեգինը: Բայց ինչ պիտի ըսէք, երբ իմանաք որ մեր բաժնեգներուն մեծ մասը մինչեւ այսօր չէ վճարում:

Ներկայ տարեշրջանի սկիզբը խոստացանք 40 ֆու. բաժնեգինի փոխարէն տալ մէկ շաբաթաթիւնը և մէկ շաբաթական յաւելում: Ապրիլ 1 էն յաւելումը վերածեցինք թիւրքի, յաւելումը որ աժանութիւնը պատճառ պիտի ըլլայ թիւրքի աւելի տարածուելուն և թէ հետեւապէս մեր բաժնորդներուն թիւին վրայ հարկը հասա ալ պիտի աւելնայ: Բազմաթիւ բարեկամներու խրախոյսը մեզ ներշնչեցին այս յոյսը, որ եթէ չիրականանար, մտադիր էինք տարեկան բաժնեգինին վճարայ 2 ֆու. ի յաւելում մը ընել, ինչպէս ժամանակին յայտարարեցինք:

Անկէ ի վեր ոչ միայն մեր բաժնորդներուն թիւը չաւելցաւ, այլ և հատով ծախուած թերթին թիւը ալ և ալ պատճառներով զգալապէս նուազեցաւ և տակաւին նուազելու վրայ է: Միւս կողմէ յարմար չի տեսնուած առայժմ բաժնեգինը աւելցնել, զի մեր յարգելի գործակալներէ և թերթին բարեկամներէ մեզ տըրուած տեղեկութիւններ մեզ ըզգացնել առին թէ բաժնեգինին վրայ յաւելում մը դժգոհութիւն պիտի պատճառէր բաժնորդներուն մեծամասնութեան որ ևս նախ դատակարարին կը վերաբերի և հետեւապէս իր նիւթական աւաւելութիւններովը չի փայլիր:

Այսպէս յաւելումին թերթի վերածմամբ մեր տարեկան պիւտճէին վրայ 5-6 ամսէ ի վեր աւելցած է 1000 ֆու. ի մասիւք մը որ հետզհետէ աւելի ծանրացող դրամական անձուկ վիճակի մը ենթարկած է մեզ:

սը—Տես, հոգիս, ինձ մի մոռանայ, չուտով կը վերադառնամ, Աստուած մեծ է—երկրորդը... Ախ, որչափ անպուժ են, դու վիզս ցաւում է... Խեղճի՛ր, քնի մէջ էլ չէին կարողանում հոգու հանգստութիւն գտնել... Միւս օրը առաւօտեան Սամուէլին թէյի հրաւիրեցի (այդ էր հրէա հաւատարմականի անունը): Թէյը խմելուց յետոյ մենք դուրս եկանք միջանցքում շրջապայելու: Զանազան նիւթերի մասին մի քիչ խօսելուց յետոյ վերջապէս դիմեցի Սամուէլին:

—Խնդրեմ, մի որոշ գաղափար առէք ինձ բանտի աւտարակների մասին, մի քանիսին հարցրի, շատ տարօրինակ բաներ են պատմում:

ՎԱՐԴՈ

(Շարունակելի)

Եթէ 40 ֆու. բաժնեգինը արդէն մէկ թիւրքի և մէկ յաւելում ածի համար շատ չափաւոր գին մը չըլլար, ինչ որ ակնհայտ կը տեսնուի Իրաւունքի բաժնեգինը արտասահմանի մէջ հրատարակուող ուրիշ հայ թերթերու բաժնեգինին հետ բաղդատելով, այսօրան չպիտի նեղուէինք աւելցած ծախքին պատճառով:

Հարկ տեսնեք այս բացատրութիւնները տալ ձեռք հրատարակաւ, որպէս զի մեր բաժնորդները իրաւելի ըլլան մեր կրած զոհողութեան և անոնք որ ցարդ իրեց բաժնեգինը չեն վճարած, թեւ լաղրունք գոնէ որքան կարելի է, շուտ հատուցանել իրենց պարտքը:

Մ. Ի Ռ. — Կարգացեալ վերի պատասխանը և պիտի հասկնաք թէ ինչ պատճառով ստիպուեցանք այն բաժնորդներուն՝ որոնք ցարդ չեն վճարած, առանձին մէջեկ նամակ զրկել և ինքնել որ հաճին վերջապէս հասցնել մեզ իրենց բաժնեգինները: Ինչպէս կերեւի, շատեր այս մասին անհոգ կը մնան, իրենցմէ իւրաքանչիւրը մոռանալով որ իր մէկ բաժնեգինի վճարման աւելի կամ նուազ յապաղումը նշանակութիւն չունենար թերթին համար: Բայց երբ շատեր այսպէս կը մտածեն, հետեւեալք այն կըլլայ, ինչ որ եղած է այսօր, այսինքն, տարեշրջանի իններորդ ամսոյն մէջ բաժնեգիններուն մեծ մասը տակաւին գանձելի կը մնայ, մինչդեռ թերթին բոլոր ծախքերը կանխիկ են ու խօսք չեն հասկնար:

Յայտնի է թէ պղատնական համակրութիւնը, որ չի զլացուիր մեզ և որուն համար խմբագրութիւնը ինքզինք շատ շնորհապարտ կը զգայ, ինքնին չի կրնար գոհացնել մեր դրամական պէտքերը:

Մ. Ի Ռ. — Ինչ աղէկ կըլլար որ քիչ մը աւելի ուշադրութեամբ կարգայիք մեր յօդուածները և որոշակի հասկնայիք ինչ որ կը զրկեք: Քննադատութիւնը իտեւալ մը չէ, բայց հարկաւոր է մեզ համար, եթէ կուզենք ազգային—հայրային կեանք ունենալ, շարժում, կենդանութիւն և ողբերգութիւն: Հարկաւոր է որ վերջապէս ամէնքս ալ հասկնանք թէ քեզի մը առաջին պարտաւ կաւոյնքիւնքիւնք միւս և քննադատելով, ոչ ոք քեզի հետ չի տեսնել: Կը կրկնենք, ալ ժամանակ է որ Պուլկարոհայիս ըմբռնեք զայս: Անանկի քննադատութիւնները կարելի է միշտ հերքել և օրինաւոր հերքումներու համար միշտ բաց պիտի ըլլան մեր էջերը:

Հ. Ի Փ. — Տեղիդ մանկապարտեզի մասին ու ե զրուծիւն ըստուցած չենք:

ԻՍԼԱՄԻՅԷԹ



Երբեք սերայը քեան իսլամներն ալ պիտի պէտք տեսնին վարժարտապիւղնան տօթընա ետզմըջ օլտըզը պիտի մէքթուպը իշպուս նուսխէմիզէ տէրճ իթմէքէ՛ Երբեք սերայը պէտք տեսնին օլտըզը ամայը ֆասիտէսին պիտի նուսխէսին գարիւնուզըն միւթալէտալնա իհալէ իթմիշ օլտըզ:

Գուրբէի արդ իւզէրինաէ պուլլնան ումում իսլամլարըն բէյիսի բուհանիսի եանի խալիֆէի զէմին պուլլնմագ իսլիհասը իլէ՛ Սուլթան տիւլէի էճնէպիլէյէ թապի օլան վէ հինախատա, Թիւրքիստանտա, Աֆրիգատա, Ճալատա վէ սուլթը գըլթալարտա պուլլնան Սիւլիմանլարը թապի օլտըզլարը իսլիսթիյան տէլէթլէրէ գարշը ըսեան ու իսլիսլալ թէշլիֆ իթտիրմէք մագսէտի իլէ՛ օլթալաֆլարա պիտի թագըմ մէմուրլար Եսլլամըջ վէ Եսլլամագտա տըր, Երբեք պուլ սայ ու զայրէթի սէմէրէսի օլարագ, ախիէն հին տիսթանըն պալը պէտէվի գապիլէլէրի իսկիլիլէրէ գարշը ըսեան իթմիշ վէ Եսլլամագտա խալթալը վէ գըլթըզ սէպէպի իլէ մուզտարըզ օլան ֆաղիր հինալիլէրին սէֆալէթինի պիտի գաթ տահա արթըրմաղա սէպէպիլէթ վէրիլմիշ տիր:

Իսկիլիլէր իսէ՛ ճահիլ հինալիլէրին Երբեք թէսսուպընա տէլթ օլմալարընա թէէսիֆ իտէլէք, պու կիւնէ գատար իսլամ թապալարընա միւստէլի վէ մուհիպպանէ տալլանմագտա վէլէլան գըլթըզտան մուզտարիպ օլան հինա թապալարընա իանէ Եսլլամագտա տըրլար. պու հաֆթա տալի Լօնտրատան 1750000 ֆու. իանէ կէօնտէրիլմիշ տիր:

Թիւրք ճէրիտէլէրի էվլէտէն պէրու ումում իսլամլարտան պահա իթմէլէլինաէ՛ Սիւլիմանլարըն չօզլըզընտան նաշի իսլիսթիյան տէլէթլէրին թէհտա Եսլլամ նէշրիթալա պուլլընթըրլար: Անլէրին պու թէհտիլին տիւլէլի մուլազըմա իշիւն նէ՛ էճմիլէթի օլտալիլէլէլին մուլթապընէ թէտըզ իտէլիմ:

Իսլամ՝ միլլէթլէրտէ պաշըմագուլլէթ սահիպի օլանլար Օսմանլար վէ Աճէմլէր տիր. պու հիւքիւմէթլէրին պուլիլան պէգաւսըն սէպէպի տիւլէլի մուլազըմանըն հալը հաղըր սիյասիլէի թէպտիլ իթմէք իսթմէթիլէրի տիր: Աֆրիգատա՛ Մըլըր՝ Թըրիպօլի՛ Թուհուս՝ Ալէրիա՛ Ֆէս վէ Մարոք էհալէթլէրի իսկիլիլէլա, Ֆրանսա վէ սուլթը պէօլիւք տէլէթլէրին՝ սօղորուտան վէ ես սօլալընտան՝ թահթը հիւքմիլտէ վէ հիւսթիլիսիտէ պուլլնմագտա տըրլար: Թիւրքիստան տալի Բուշսիանըն գապիլթ ալթընտա տըր:

